Երրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1018[4]-11.11.2010,07.12.2010-ՏՀ-010/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. **Հոդված 1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 59-րդ հոդվածում ավելացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ. <Հազվագյուտ երկրաբանական մերկացումների, հանքաբանական գոյացումների, հնէաբանական օբյեկտների ու գիտական և գիտամշակութային հատուկ արժեք ներկայացնող ընդերքի մյուս տեղամասերի պահպանման սահմանված կարգի խախտումները՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրհինսնապատիկի չափով:

Հոդված 2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 242-րդ հոդվածից հանել <59-րդ և 60-րդ հոդվածներով (բացառությամբ լեռնային աշխատանքների անվտանգ կատարման և ռադիոակտիվ հսկողության մասերի), 60-րդ, 60[1]-րդ,> բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 169[4]-րդ հոդվածում <բնապահպանական> բառը փոխարինել <լիազոր> բառով:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 242[1]-րդ հոդվածով.

<**Հոդված 242[1]. Ընդերքի օգտագործման ու պահպանման բնագավառում՝ պետական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմինը**

Ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում՝ պետական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմինը քննում է վարչական գործեր և նշանակում վարչական տույժեր սույն օրենսգրքի 49-րդ, 59-րդ, 60-րդ (բացառությամբ լեռնային աշխատանքների անվտանգ կատարման և ռադիոակտիվ հսկողության մասերի), 60[1]-րդ հոդվածներով (բացառությամբ Ընդերքն օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված նպատակով շահագործելու դեպքի), 169[4]-րդ հոդվածով (օգտակար հանածոների մասով) նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ:>:

Հոդված 5 . Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: